# ՍԵԶՈՆԱՅԻՆ ԱՐՏԱԳՆԱՑՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՆՆԵՐԸ ՀԱՅԿԱԿԱՆ ԽՍՀ-ՈՒՄ

## (ըստ էթնոսոցիոլոգիական հետազոտության նյութերի)

Մ. Վ. ԳԱԼՍՏՅԱՆ

*Այնպիսի բազմազգ երկրում, ինչպիսին Խորհրդային Միությունն է, բնակչության տեղաշարժերի ուսումնասիրության գերը մեծ է ոչ միայն ազգամիջյան հարաբերությունների կարգավորման, այլև էթնիկական տարբեր ընդհանրությունների հետագա զարգացման ու մերձեցման գործում[1]։*

*Սեզոնային արտագնա աշխատանքը, որի հիմքում ընկած է տարվա որոշակի ժամանակաշրջանում իրենց բնակավայրից դեպի այլ տարածքներ բնակչության որոշ մասի ժամանակավոր տեղափոխությունը, ընդհանուր միգրացիոն պրոցեսի բաղկացուցիչ մասերից է։ Այն Արևելյան Հայաստանում առավել մեծ մասշտաբներ ընդունեց XIX դ. վերջին և XX դ. սկզբին։ Այսպես, օրինակ, եթե XIX դ. կեսին Երևանի նահանգի տարբեր գավառներից արտագնացության մեկնողների թվաքանակն աննշան էր[2], ապա 1898 թ. այն հասավ մոտավորապես 20 հազարի[3], իսկ 1913 թ. 50 հազարի[4]։ Գյուղացիության այսպիսի մասսայական արտագնացության հիմնական պատճառը կարիքն ու աղքատությունն էր, որը ստիպում էր բռնելու արդյունաբերական խոշոր քաղաքների ճանապարհը՝ ընտանիքի նյութական նվազագույն պահանջմունքները բավարարելու համար։*

*Հայաստանում արտագնացության բարձր տեմպերը պահպանվեցին նաև խորհրդային կարգերի հաստատումից հետո։ 1926 թ. արտագնացների թվաքանակը հասնում էր 65 հազար մարդու, որից 30 հազարն արտագնացության էր մեկնել նրա սահմաններից դուրս։*

*Մեր երկրում 1950-ական թվականներից սկսած սեզոնային արտագնա աշխատանքի մեկնողների տոկոսն աճեց։ Այն ամենից առաջ պայմանավորված էր Ղազախստանի, Սիբիրի, Ուրալի, Պովոլժիեի և այլ շրջանների խամ ու խոպան հողերի յուրացմամբ։ Ժամանակակից պայմաններում արտագնացությունն ակտիվորեն է ծավալվում ԽՍՀՄ ագրային մի շարք շրջաններում՝ հատկապես Անդրկովկասում և Հյուսիսային Կովկասում, որին, ոչ լրիվ տվյալներով, մասնակցում են համապատասխանաբար 100 հազար մարդ, ինչպես նաև Արևմտյան Ուկրաինայում, Բելոռուսիայում, Մոլդավիայում՝ 50 հազար մարդ և այլն[6]։ Ըստ վիճակագրական տվյալների, սեր հանրապետությունից ամեն տարի այդ պրոցեսին մասնակցում է մոտավորապես 25—30 հազար մարդ[7]։ Հայաստանի կոմկուսի կենտկոմը 1987 թ., անդրադառնալով «Հայկական ԽՍՀ-ի լեռնային և նախալեռնային շրջանների տնտեսական ու սոցիալական հետագա զարգացման միջոցառումների մասին» որոշման կատարման ընթացքին, մեկ անգամ ևս*

---

[1] *Հետազոտությունն անցկացված է 1985—1987 թթ.՝ ՀԽՍՀ ԳԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի էթնոսոցիոլոգիայի բաժնի կողմից։ Հոդվածում օգտագործվել են նաև Հայկական ԽՍՀ տարբեր շրջաններում հեղինակի հավաքած դաշտային ազգագրական նյութերը (տե՛ս ՀԽՍՀ ԳԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի էթնոսոցիոլոգիայի բաժնի արխիվ)։*

[2] Сборник статистических сведений о Кавказе, отд. 3, т. 1, Тифлис, 1869, с. 49, 59, 67.

[3] Обзор Эриванской губернии за 1908 г., Эривань, 1909, с. 8.

[4] Обзор Эриванской губернии за 1913 г., Эривань, 1914, с. 15.

[5] Экономический вестник Армении, Ереван, 1927, № 1, с. 15.

[6] Известия, 18. IV. 1985.

[7] *Նույն տեղում, 15.IV.1986։*

նշեց, որ «Արթիկի, Ախուրյանի, Կալինինոյի, Մարտունու շրջաններում շարունակում է բարձր մնալ արտագնացությունը»[8]։

Ինչպես տեսնում ենք, սեզոնային արտագնա աշխատանքը մեր երկրում արդեն երկար տարիներ կայուն կերպով պահպանում է իր մասշտաբները։ Չնայած դրան, այն համապատասխան գիտական գրականության մեջ դեռևս ամբողջական հիմնավորում չի ստացել։ Պրոբլեմի ուսումնասիրության նման վիճակն ամենից առաջ բացատրվում է այն հանգամանքով, որ սեզոնային արտագնա աշխատանքը դեռևս տարերային պրոցես է, և այդ երևույթը բնութագրող փաստացի տվյալները բացակայում են։ «Ինչ վերաբերում է սեզոնային միգրացիային, ապա այստեղ որևէ ընդհանուր վիճակագրական հաշվետվություն համարյա չի կատարվում և այդ մասին դաղափար ենք կազմում ելնելով ժողովրդական տնտեսության ցաք ու ցրիվ տվյալներից»[9]։

Այսպիսով, ժողովրդական տնտեսության մեջ արտագնա աշխատանքի տեղի և դերի, հնչպես նաև սոցիալական կյանքում նրա էթնոսոցիալ հետևանքների գնահատման հարցերը պահանջում են խոր և բազմակողմանի մոտեցում։ Երևույթի ուսումնասիրությունը ՀԽՍՀ ժողովրդական տնտեսության համար ունի ինչպես տեսական, այնպես էլ գործնական նշանակություն։ Այն հնարավորություն կտա հետագայում այդ պրոցեսին հաղորդելու կարգավորված, պլանավորված բնույթ։ Դրա ամբողջական վերլուծության անհրաժեշտությունն է՛լ ավելի է մեծանում մեր օրերում, երբ ամբողջ երկրում դրված են ժողովրդական տնտեսության հետագա զարգացման, աշխատանքային ռեսուրսների ռացիոնալ օգտագործման և մարդկային գործոնի ակտիվացման հարցերը։

Ստացված էթնոսոցիոլոգիական հետազոտության նյութերի վերլուծությունից (աղյուսակ № 1) պարզվում է, որ արտագնացների 91 %-ը 18-ից մինչև 50 և դրանից բարձր տարիքի աշխատունակ հասակի տղամարդիկ են, որոնք ընդմիջումներով տարբեր տարիների եղել են արտագնա աշխատանքի վայրում[10]։

Աղյուսակ № 1

Արտագնացության ստաժն ըստ տարիքային կազմի (%-ով)

| Արտագնացների տարիքային կազմը | Արտագնացության ստաժը | | | | Հարցին դժվարացել են պատասխանել | Ընդամենը |
|---|---|---|---|---|---|---|
| | 1—3 տարի | 3—6 տարի | 6—10 տարի | 10-ից բարձր | | |
| 18—29 | 43 | 36 | 15 | 4 | 2 | 100 |
| 30—49 | 20 | 27 | 33 | 17 | 3 | 100 |
| 50 և ավելի բարձր | 15 | 19 | 21 | 43 | 2 | 100 |
| ընդամենը | 20 | 27 | 23 | 21 | 9 | 100 |

Եթե անցյալում, կապված ազգային ավանդույթների և ընտանիքում կանանց տեղի ու դերի գնահատման հետ, կանայք արտագնացության պրոցեսին համարյա չէին մասնակցում, ապա ժամանակակից պայմաններում նրանք երբեմն ընկերակցում են իրենց ամուսիններին

---

8 Սովետական Հայաստան, 2. IV. 1987։

9 Б. С. Хорев, В. И. Чапек, Проблемы изучения миграции населения (статистико-географический очерк), М., 1978, с. 38.

10 Այս և հետագա տոկոսային տվյալները հաշվարկվել են հետազոտության նյութերի հիման վրա։

(9 %)։ Կանանց մասնակցությունն արտադնացության պրոցեսին բացատրվում է ինչպես կայուն ընտանիք ունենալու արժեքային կողմնորոշմամբ, այնպես էլ արտադնա աշխատանքի վայրում վճարման սկզբունքով կենցաղային կարիքների բավարարման, հատկապես ազգային խոհանոցի կազմակերպման փաստով, որի կարիքն արտադնացները շատ են զգում։

Արտադնա խմբերը միջին հաշվով բաղկացած են 3-ից մինչև 6 անդամից։ Դրանց կազմավորման գործում, ինչպես երևում է № 2 աղյուսակից, կարևոր դեր են կատարում գոյություն ունեցող անձամիջյան սերտ կապերի ոլորտները՝ ազգակցական և հարևանային կապեր, աշխատանքային, կոլեկտիվ, ընկերական հարաբերություններ և այլն։

Աղյուսակ № 2

Արտադնա խմբերի կազմավորման աղբյուրները (%-ով)

| Արտադնացների տարիքային կազմը | Հարազատներ | Բարեկամներ | Աշխատանքային ընկերներ | Ծանոթներ | Հարցին դժվարացել են պատասխանել | Ընդամենը |
|---|---|---|---|---|---|---|
| 18—29 | 32 | 22 | 7 | 35 | 4 | 100 |
| 30—49 | 21 | 23 | 10 | 35 | 11 | 100 |
| 50 և ավելի բարձր | 21 | 31 | 8 | 27 | 11 | 100 |
| ընդամենը | 23 | 23 | 10 | 30 | 14 | 100 |

Այս խմբերից յուրաքանչյուրի կազմավորման համար գործում է յուրահատուկ մեխանիզմ։ Օրինակ, հարազատներով արտադնացության մեկնող խմբերը կազմվում են ինչպես միևնույն ընտանիքի անդամներից՝ հայր, որդիներ և այլն, այնպես էլ ամուսնու կամ կնոջ հարազատներից։ Սա մի կողմից միանշանակ ընդլայնում է տվյալ ընտանիքի դրամական բյուջեն, մյուս կողմից՝ արտադնա աշխատանքի վայրում ազգակցական կապի մոտիվացիայի աստիճանն ազդում է նրանց վարքի կանոնների վրա։ № 2 աղյուսակից երևում է, որ հարազատներով մեկնողների հետ ամենաբարձր տոկոսը (32) կազմում են 18—29 տարեկանները։ Ընդհանրապես թվարկված բոլոր խմբերի համար արտադնացության խթանման գործում կարևոր դեր են կատարում գյուղական բնակչության ընտանեկան կառուցվածքի էթնիկական առանձնահատկությունները և գյուղական շրջաններում կայուն պահպանվող մի շարք էթնիկ ավանդութային ձևեր։ Այստեղ ամենից առաջ նկատի ունենք բարդ ընտանիքը, որը գյուղական բնակչության մեջ դեռևս պահպանվում է (50 %)։ Այն ոչ միայն չի խանգարում, այլև նպաստում է ընտանիքից մեկ կամ նույնիսկ մի քանի հոգու արտադնացությանը։ Իսկ պարզ կառուցվածք ունեցող ընտանիքից նրա գլխավորի բացակայությանը նպաստում են գյուղական բնակչության մեջ ամուր պահպանվող ազգակցական կապերի ամբողջությունը և միմյանց նկատմամբ ցուցաբերվող փոխօգնության տարբեր ձևերը։

Անցկացված էթնոսոցիոլոգիական հետազոտության շնորհիվ հետաքրքիր նյութեր են ստացվել նաև արտադնացության դրդապատճառների վերաբերյալ։ Այն առաջին հերթին կապված է անհատի անձնական շահերի ու պահանջմունքների հետ և ունի օբյեկտիվ պայմանավորվածություն։ Այդ են վկայում № 3 աղյուսակի տվյալները։

Աղյուսակ № 3

Արտադնացության դրդապատճառներն ըստ տարիքային կազմի (%-ով)

| Արտադնացների տարիքային կազմը | Տեղում համապատասխան աշխատանքի բացակայությունը | Արտադնա աշխատանքի վայրում հնարավորություն կա ավելի բարձր աշխատավարձ ստանալ | Դրամ է հարկավոր մեծ ծախսերի համար | Այլ պատճառներ | Ընդամենը |
|---|---|---|---|---|---|
| 18—29 | 29 | 41 | 18 | 12 | 100 |
| 30—49 | 30 | 36 | 24 | 10 | 100 |
| 50 և ավելի բարձր | 29 | 40 | 23 | 8 | 100 |
| ընդամենը | 30 | 43 | 18 | 9 | 100 |

Ինչպես կարելի է գտնել № 3 աղյուսակից, արտադնացության առավել խթանիչ դրդապատճառն արտադնա աշխատանքի վայրում ավելի բարձր աշխատավարձ ստանալն է (43 %)։ Այսպիսի պատասխանն ունի իր ռեալ հիմքերը։ Այն առավել ցայտուն է երևում, երբ համեմատում ենք տեղում և արտադնա աշխատանքի վայրում նրանց ստացած եկամուտները։

Աղյուսակ № 4

Միջին ամսական աշխատավարձը տեղում և արտադնա աշխատանքի վայրում (%-ով)

| Աշխատավարձի չափը (ռուբլիներով) | Տեղում | Արտադնա աշխատանքի վայրում |
|---|---|---|
| 81— 100 | 21 | — |
| 101— 150 | 40 | — |
| 151— 200 | 30 | — |
| 201— 250 | 7 | — |
| 251— 300 | 1 | — |
| 301— 400 | 1 | — |
| 401— 500 | — | 20 |
| 500—1000 | — | 48 |
| 1000-ից բարձր | — | 24 |

Բացի աշխատավարձից, գյուղական բնակչության ընտանիքի եկամուտները ձևավորվում են նաև անձնական օժանդակ տնտեսությունից (13 %)։ Բայց պետք է նշել, որ ստացած եկամուտները չեն բավարարում գյուղական բնակչության բաղմանդամ ընտանիքի հարաճուն պահանջմունքները (1979 թ. մարդահամարի տվյալներով ՀԽՍՀ գյուղական բնակչության ընտանիքի միջին չափը կազմել է 5,2 մարդ)[11]։ Մինչդեռ գրությունն արտագնա աշխատանքի վայրում այլ է։ Արտագնացներն առավելագույն եկամուտը գնահատելով առավելագույն աշխատանքով[12], 5—7 ամսվա ընթացքում վաստակում են 6—8, նույնիսկ 10 հազար ռուբլի։ Տարվա ընթացքում ամսական միջին աշխատավարձը կազմում է 400—800 ռ., որը մի քանի անգամ ավելի է 1984 թ. ՀԽՍՀ ժողովրդական տնտեսության մեջ զբաղված յուրաքանչյուր աշխատողի և ծառայողի միջին ամսական աշխատավարձից (177 ռ.)[13]։

Արտագնացներն այսպիսի բարձր աշխատավարձը վաստակում են ինտենսիվ ու ծանրաբեռնված աշխատանքային գրաֆիկի շնորհիվ։ Բացի այդ, տուաշնորդվելով աշխատանքի կազմակերպման բրիգադային կապալի և աշխատավարձի վճարման գործավարձային սկզբունքներով, արտագնացները կատարում են տիպային պայմանագրով նախատեսվող օբյեկտի հանձնման ժամկետները և ստանում 40 % հավելյալ վարձատրություն (մի բան, որը ՀԽՍՀ-ում չի կիրառվում)։ Բարձր աշխատավարձը պայմանավորված է նաև նրանով, որ արտագնացներն ընտրողական վերաբերմունք ունեն ԽՍՀՄ այն շրջանների նկատմամբ, որտեղ զգացվում է աշխատանքային ռեսուրսների խիստ պակաս։ Դա նրանց հնարավորություն է տալիս իրենց աշխատուժը կիրառել ժողովրդական տնտեսության ցանկացած բնագավառում։ Ըստ հետազոտության արդյունքների, այդպիսին են ՌԽՖՍՀ հյուսիսային և արևելյան շրջանները, ուր մեկնում են արտագնացների 88 %-ը և Ղազախական ԽՍՀ-ն՝ (6 %-ը) և այլն։

Արտագնացները, լինելով բարձր որակավորում ունեցող ոչ ինդուստրիալ (շինարար, ծեփագործ, հյուսն, ատաղձագործ և այլն) և ինդուստրիալ (մեխանիզատոր, ավտովարորդ, խառատ և այլն) բնագավառի աշխատողներ (աղյուսակ № 5), հիմնականում ընդգրկվում են

Աղյուսակ № 5

Արտագնացների սոցիալ-մասնագիտական կազմն ըստ տարիքի (%-ով)

| Տարիքային խմբերը | Ինքնուրույն գյուղատնտեսական արտադրանքի արտադրողներ | Գյուղատնտեսական արտադրանքի արտադրողներ | Ոչ գյուղատնտեսական ոլորտի աշխատողներ | Ծառայողներ | Բարձր որակավորում ունեցող գյուղատնտեսական աշխատողներ | Գյուղատնտեսական աշխատողներ | Ընդամենը |
|---|---|---|---|---|---|---|---|
| 18—29 | 2 | 39 | 38 | 9 | 8 | 3 | 100 |
| 30—49 | 9 | 50 | 26 | 0 | 3 | 2 | 100 |
| 50 և ավելի բարձր | 7 | 61 | 29 | — | — | 3 | 100 |
| Ընդամենը | 6 | 47 | 29 | 7 | 3 | 3 | 100 |

[11] Население СССР, население Армянской ССР, по данным Всесоюзной переписи населения 1979 года, Ереван, 1980, с. 33.

[12] Экономика и организация промышленного производства, 1986, № 3, с. 8.

[13] Народное хозяйство АрмССР в 1984 г., Ереван, 1985, с. 193.

շինարարական բնույթի աշխատանքներում, որտեղ աշխատավարձը ժողովրդական տնտեսության մյուս բնագավառների համեմատությամբ ավելի բարձր է։ Արտագնացության ընթացքում նրանք ձեռք են բերում մի քանի նոր մասնագիտություններ և տեղի շինարարների հետ համեմատած կառուցում են 2—3 անգամ արագ[14]։

Արտագնա աշխատանքի մեկնելու մյուս կարևոր դրդապատճառը (30 %) տեղում համապատասխան աշխատանքի բացակայությունն է։ Այս հարցը հատկապես սուր է դրված ՀԽՍՀ լեռնային և նախալեռնային շրջաններում, որտեղ աշխատանքային տեղերի և աշխատանքի կիրառման ոլորտների բացակայության պայմաններում այնքան էլ հեշտ չէ մասնագիտությանը համապատասխան աշխատանք գտնել։ Որքան էլ հակասական է, դա առաջին հերթին կապված է գյուղատնտեսական աշխատանքների մեքենայացման և ինդուստրացման պրոցեսի հետ, որի հետևանքով աշխատունակ բնակչության որոշ մասը դուրս է մղվում այդ ոլորտից։ Այսպես, օրինակ, Արթիկի շրջանի Փանիկ գյուղում գյուղխորհրդի ենթակայության տարածքում 1985 թ. մշտական աշխատանք ուներ աշխատունակ տղամարդկանց միայն 13 %-ը։ Նման պայմանների հետևանքով այդ գյուղի աշխատունակ հասակի տղամարդկանց 22 %-ը համարյա ամեն տարի մեկնում է արտագնա աշխատանքի։ Լեռնային և նախալեռնային շրջաններում գյուղատնտեսության բնագավառում ընդգրկված բնակչության լրիվ զբաղվածության վրա իրենց ազդեցությունն են թողնում նաև բնակլիմայական դժվարին պայմանները։ Դրանք գյուղատնտեսական աշխատանքներին հաղորդում են խիստ սեզոնային բնույթ, որն առավել ցայտուն է դրսևորվում հողագործության մեջ (այստեղ յուրաքանչյուր աշխատողի զբաղվածությունը տարեկան կազմում է 150 օր)[15]։ Այդ աշխատանքային ռեսուրսների օգտագործումն ունի նաև որոշ առանձնահատկություններ. դրանք տարվա ընթացքում օգտագործվում են ոչ հավասարաչափ՝ առավել ինտենսիվ ամառային շրջանում և ոչ լրիվ՝ ձմռանը[16]։

Արտագնացների որոշ մասը (18 %) արտագնացության մեկնում են տեղում մեծ ծախսերի համար փող ձեռք բերելու նպատակով։ Այդ ծախսերի զգալի մասը, ինչպես երևում է № 6 աղյուսակից, ունեն ազգային ավանդական բնութագրեր (օրինակ՝ բնակարանի կառուցում)։

Աղյուսակ № 6։

Բնակարանի կառուցման համար ծախսեր (%-ով)

| Արտագնացների տարիքային կազմը | Ում համար է կառուցում բնակարան | | | Հարցին ղժվարացել են պատասխանել | Ընդամենը |
|---|---|---|---|---|---|
| | իր | որդու | դստեր | | |
| 18—29 | 74 | 9 | 4 | 13 | 100 |
| 30—49 | 41 | 44 | 2 | 13 | 100 |
| 50 և ավելի բարձր | 25 | 58 | 3 | 14 | 100 |
| ընդամենը | 46 | 34 | 3 | 17 | 100 |

Ինչպես կարելի է դատել № 6 աղյուսակից, հայրը արտագնա աշխատանքի վայրում վաստ-

[14] Известия АН СССР Сибирского отделения, серия экономики и прикладной социологии, 1986, № 7, вып. 2, с. 50.

[15] Վ. Շ. Թովմասյան, Ս. Ն. Սիմոնյան, Աշխատուժի վերարտադրության ռեգիոնալ առանձնահատկությունները, Երևան, 1985, էջ 185։

[16] Методологические проблемы системного изучения деревни, Новосибирск, 1977, с. 206.

տակած դրամով հոգում է ոչ միայն իր, այլև իրենից բաժանվող որդիների բնակարանի կառուցման ծախսերը։

Այստեղ կարևոր դեր են կատարում գյուղական բնակչության մեջ երևույթի վերաբերյալ դարեր շարունակ գոյություն ունեցող ազգային ավանդույթի պահպանումը և հասարակական կարծիքի առկայությունը։ Միաժամանակ, № 6 աղյուսակից երևում է, որ այս դրդապատճառը չխոշոր դեր է կատարում 50 և ավելի բարձր տարիք ունեցող արտագնացների միգրացիոն վարքի ձևավորման գործում։

Մեր օրերում արտագնացության կարևոր խթաններից են նաև ամուսնական արարողությունների՝ հատկապես հարսանիքի, ինչպես նաև դստեր օժիտի հետ կապված ծախսերը (աղյուսակ № 7)։ Ժամանակակից պայմաններում այդպիսի մեծ ծախսերը մի կողմից կապված են ընտանիքի նյութական ապահովվածության աստիճանի, մյուս կողմից՝ երևույթի վերաբերյալ յուրաքանչյուր գյուղում ձևավորվող նոր չափանիշների հետ[17]։ Այսպիսի ծախսերն արտագնացների որոշ մասի մեջ ձեռք են բերել նոր երանգավորում։ Արտագնա աշխատանքի վայրում վաստակած մեծ գումարները ճոխ հարսանեկան արարողությունների և օժիտի համար հիմք են։ Սա, անշուշտ, բացասաբար է անդրադառնում բնակչության հոգեբանական մթնոլորտի և արժեքային կողմնորոշման ձևավորման վրա՝ հաճախ տեղիք տալով «ուրիշից հետ չմնալու» մրցակցության սովորույթին[18]։

Այս բոլորի հետ միասին, ժամանակակից ուրբանիզացված գյուղի պայմաններում բնակչության սոցիալական պահանջմունքների համակարգում ընտանեկան կենցաղի մեծ հարմարավետության ապահովման ձգտումը խթանում է նման միգրացիոն վարքի ձևավորումը։ Ըստ հետազոտության արդյունքների, արտագնացների 55 %-ը դրդապատճառ են համարում անձնական օգտագործման ավտոմեքենայի, իսկ 35 %-ը՝ հեղինակավոր իրերի գնումը, ինչպես նաև բնակարանի ընթացիկ վերանորոգումը և այլն։

Հարցումներից պարզվեց, որ արտագնացության այլ դրդապատճառները՝ (9 %), կապված արտագնացների տարիքային կազմի հետ, ունեն որոշակի առանձնահատկություններ։ Օրինակ, 18—29 տարեկաններն արտագնացության կարևոր խթան են համարում «նոր աշխարհներ» տեսնելը, այլ ազգության մարդկանց հետ շփումը, նոր մասնագիտության ձեռքբերումը, ռուսաց լեզվի իմացության խորացումը՝ արտագնա աշխատանքի վայրում բարձրագույն ուսումնական հաստատություն ընդունվելու համար, այլ միշավայրում առավել «բաց» կապերի ստեղծում և այլն, իսկ 50-ից բարձրերը՝ ընտանիքի «նեղ օրվա» համար դրամական եկամուտների վաստակումը և այլն։

Արտագնացությունն ունի մի շարք բարդ ու բազմաբնույթ հետևանքներ, որոնք չկետք է միանշանակ գնահատել։ Օրինակ՝ ՀԽՍՀ ժողովրդական տնտեսության դիրքերից արտագնացությունն ունի բացասական հետևանքներ, քանի որ ուղեկցվում է հասարակական արտադրության պրոցեսից որակյալ աշխատուժի մի մասի հոսունությամբ։ Վերջինս առավել ցայտուն ձևով է դրսևորվում գյուղատնտեսության (23 %), շինարարության և տրանսպորտի բնագավառներում (19 %)։ (աղյուսակ № 8), որտեղ աշխատանքային առավել եռուն ժամանակաշրջանում (գարուն-աշուն) զգացվում է որակյալ աշխատանքային կադրերի մեծ պակաս (ըստ ՀԽՍՀ աշխատանքի պետական կոմիտեի տվյալների, 1984 թ. ժողովրդական տնտեսության մեջ 26 մասնագիտությունների գծով պահանջվել են 27,6 հազար որակյալ կադրեր[19]։

Աղյուսակ № 7

Ամուսնական արարողությունների և հարսանիքի համար ծախսեր (%-ով)

| Իր համար | Որդու համար | Դստեր համար | Հարցին դժվարացել են պատասխանել |
|---|---|---|---|
| 29 | 29 | 21 | 21 |

17 Է. Տ. Կարապետյան, Օժիտը հայոց մեջ, Երևան, 1973, էջ 111։

18 Նույն տեղում, էջ 116։

19 Социалистический труд, М., 1985, № 4, с. 72.

այդ թվում 7—8 հազար ոռակյալ շինարարներ)։ Անշուշտ, այս բոլորը բացասաբար է ազդում տվյալ տնտեսական շրջանի արդյունաբերության զարգացման տեմպերի և աշխատանքի արտադրողականության բարձրացման վրա։

Աղյուսակ № 8

Աշխատուժի հոսունությունը ժողովրդական տնտեսության տարբեր բնագավառներից (%-ով)

| Արտաքսվածների տարիքային կազմը | Արդյունաբերություն և ձեռնարկություն | Շինարարություն | Գյուղատնտեսություն | Էներգետիկա | Կոյուղնտեսություն, առևտուր | Քաղաքում էլեկտրաֆիկացված տնտեսություն | Մեքենաշինություն | Ընդամենը |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| 18—29 | 11 | 21 | 7 | 23 | 14 | 7 | 15 | 100 |
| 30—49 | 21 | 14 | 6 | 18 | 27 | 6 | 4 | 100 |
| 50 և ավելի բարձր | 5 | 31 | 3 | 15 | 33 | 1 | 1 | 100 |
| Ընդամենը | 13 | 19 | 5 | 18 | 23 | 6 | 7 | 100 |

Արտագնացության բացասական ազդեցությունը մեծ է հատկապես ընտանիքի վրա։ Ընտանիքից արտագնացի երկարատև բացակայությունը հանգեցնում է մի շարք լուրջ հետևանքների՝ բարոյական նորմերն Ցուլացում և ապակողմնորոշված վարքագիծ, ամուսնալուծություններ, ընտանիքի լքումներ, ամենատարբեր հիվանդությունների ձեռքբերում և այլն։ Դրանք հատկապես ցայտուն ձևով են դրսևորվում գյուղական այն բնակավայրերում, որոնք աչքի են ընկնում առավել բարձր արտագնացությամբ։ Արտագնացությունը բացասաբար է անդրադառնում նաև ընտանիքում երեխաների դաստիարակության և նրանց արժեքային կողմնորոշման վրա։ Այս բոլորով հանդերձ, արտագնացների ակտիվ և երկարաժամկետ միջանձային շփումները էթնիկական տարբեր խմբերի ներկայացուցիչների հետ որոշակի փոփոխություններ են առաջ բերում նրանց արժեքային կողմնորոշման և ավանդական վարքագծի մեջ, խորացնում ռուսաց լեզվի իմացությունը, նպաստում ազգային խառը ամուսնությունների ընդլայնմանը։

Այսպիսով, ՀԽՍՀ-ում արտագնացության՝ որպես բարդ սոցիալ-տնտեսական երևույթի հետագա կարգավորման և պլանավորման համար ոչ միայն զուտ տնտեսական գործոնների, այլև էթնիկական առանձնահատկությունների վերլուծության անհրաժեշտություն է զգացվում։ Այն ունի հարաբերական ինքնուրույնություն և կարող է այս կամ այն ձևով ազդել բնակչության զբաղվածության ու շարժունության, սոցիալ-մասնագիտական կազմի, ընտանիքի չափերի և կառուցվածքի, միգրացիայի ինտենսիվության վրա։

# ОСНОВНЫЕ ФАКТОРЫ СЕЗОННОЙ МИГРАЦИИ В АРМССР

## (по материалам этносоциологического исследования)

М. В. ГАЛСТЯН

**Резюме**

Уже многие годы в АрмССР в больших масштабах сохраняется стабильная сезонная миграция. В этом процессе ежегодно участвуют приблизительно 25—30 тыс. человек.

Результаты этносоциологического исследования выявили ряд социально-экономических и этнических факторов, обусловливающих сезонную миграцию, как-то: возможность большего заработка (43%), отсутствие соответствующей работы на местах (30%), необходимость в больших затратах — на строительство дома, на свадьбу сына или приданое дочери (18%).

Ряд причин сезонной миграции имеет корни в традиционном поведении армян. Поэтому для дальнейшего урегулирования и планирования процесса сезонной миграции в АрмССР необходимо учитывать не только социально-экономический, но и этнический фактор.